«...ՄԱՐՄԻՆՆ ՈՒ ՀՈԳԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՂԸ ՄԻՏՔՆ Է »

Եղիշե

Կատարյալ փիլիսոփան բնորոշվում է այս երեք առանձնահատկություններով՝ բարությամբ, իմաստությամբ եւ կարողությամբ: Նրան հատուկ է բարությունը, որովհետեւ ինչպես Աստված հոգ է տանում բոլորի մասին, այնպես եւ կատարյալ փիլիսոփան հոգ է տանում անկատար հոգիների մասին՝ հաղորդելով նրանց կատարյալ գիտություն: Նրան հատուկ է իմաստությունը, որովհետեւ ինչպես Աստված ամենագետ է, այնպես եւ կատարյալ փիլիսոփան ձգտում է ամեն ինչ իմանալ եւ գիտե այն, ինչ օգտակար է: Նրան հատուկ է նաեւ կարողությունը, որովհետեւ ինչպես Աստված կարող է իրագործել պատշաճ ձեւով այն ամենը, ինչ որ կամենում է, նույնպես եւ կատարյալ փիլիսոփան կարող է անել իր ուժերի սահմաններում այն, ինչ կամենում է, բայց նա երբեք չի ցանկանա այն, ինչ իր ուժերից վեր է:

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ

«Արեգնածին» գրական ակումբի ավանդական հրավերն էր Ավետիք Իսահակյանի հարկի տակ՝ «Հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ» բանաստեղծական տողի ճշմարտության խորհրդով: Բարության եւ իմաստնության, նաեւ կարողության, ինչպես ավանդված է մեզ մեր ոսկեդարից: Դավիթ Անհաղթի փիլիսոփայությամբ աստվածային զորության՝ մարդկային բանաստեղծական զորության չափանիշների մեջ:

2005թ. ուստարին Հայոց ցեղասպանության 90-րդ տարին է, որ տասնամյակներ է լինելիության՝ հայ բանաստեղծների հոբելյանների հանդիսություններով, թրի դեմ գրիչ ազգային նկարագրի առաքելությամբ: Դանիել Վարուժանի կամքն ու կորովն էր համր լռության եւ կույր ոչնչին դիմակայել: Աստվածային արարչագործ, ստեղծագործ միտքը նվաճում է ապագայի հորիզոններ: Վարպետի հարկի տակ Երեւանի թիվ 10, 16, 35 դպրոցների սաներն էին իրենց ուսուցիչների եւ ծնողների հետ: Եկել էին ունկնդիրը լինելու Խաչատուր Աբովյանի պատգամների, Վահան Տերյանի քնարական խոսքի եւ Իսահակյանի «Երջանկության իմաստը» զրույցի, քանզի «բանաստեղծներն են հասկացել դույզն-ինչ» տիեզերական անհունության ժամանակի մեջ մեր կենսակերպի դերն ու նշանակությունը:

Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը Երեւանում